թենեաց պարտէզը, որ ցայժմ սեպհականութիւնն է Ս. Յակոբայ։

3. Անորհաս Պատրիարք Մարտինցի՝ 1549ին կը մաքրէ Գեթսեմանիի եկեղեցին ու դատաւորին հրամանովը մարմարիոն քարերով կը նորոգէ Ս. Կուսին Գերեզմանը։

4. Տեղացիք 1584ին արգելք կը յարուցանեն Հայոց Գեթսեմանիի եկեղեցիին մէջ պաշտամունք կատարելու. Խաչատուր և Փիլիպոս եպիսկոպոսները մայրաքաղաքին մէջ կը դիմեն կայսեր և կ'ստանան հրովարտակ՝ ըստ առաջնոյն չարունակելու եկեղեցական պաշտամունքը։

5. 1650ին ալ դարձեալ նոյն եկեղեցին ջրով կը լեցուի, այս անգամ Հայք, Յոյնք և Լատինք կը մաքրեն եկեղեցին, ուր ջուրը մինչև սեղանները բարձրացած էր և գաւթին մէջ դիզուած հողը կը պարպեն։

Վերև յիշուած ցուցումներէն չորսը յայտնի կը վկայեն թէ Ս. Աստուածածնի Գերեզմանի եկեղեցին հայկական սեպհականութիւն մըն էր. հաւանական կը թուի որ Հայոց շնորհուեցաւ նոյն եկեղեցին 1187էն սկսեալ, երբ Սալահէտտին Երուսաղէմը գրաւեց և Լատինք մերժուեցան քաղաքէն ու Ս. Տեղերէն։ Քրիստոսի Ս. Գերեզմանին՝ Սալահէտտինի կողմէն Հայոց շնորհուելու պատմական պարագան (Տե՛ս Սիոն 1929, էջ 172) կը քաջալերէ մեզ որ ճշդութիւն մը նկատենք Գեթսեմանիի եկեղեցիին Հայոց սեպհական ըլլալը, մանաւանդ որ նոյնը կը հաստատեն վերև նշանակուած պատմական արձանագրութիւնները, որով սա եզրակացութեան կու գանք թէ Ս. Աստուածածնի տաճարը ԺԲ-ԺԶ դար Հայոց ձեռքը կը գտնուէր։

Քաղաքական ազդեցութիւններու հետևանքով սակայն, յետոյ Յոյներն ու Լատիններն ևս միջամտեցին և Հայոց հետ սեպհականատէր դարձան նոյն տաճարին։ 1758ին Յոյները համարձակեցան հրովարտակով տաճարին սեպհականութեան մասնակցութենէն դուրս հանել Հայերը և Լատինները, բայց Հայք մէկ տարի աշխատեցան Յունաց անիրաւութիւնները հերքելու և յաջողեցան ձեռք բերել իրենց կորուսած իրաւունքը. իսկ Լատինք չյաջողեցան։ Հիճրէթի 1228 թուականին Սուլթան Մահմուտի շնորհած կրկին հրովարտակներով Հայք և Յոյնք սեպհականատէր եղած են Ս. Կուսի նոյն տաճարին, իսկ Հայոց հետևակ Ղպտիները և Սասրիները հոն կրնան պաշտամունք կատարել, ինչպէս յիշած ենք։